

ԳԼԻՎԼԵՆՏԻ ՀԱՅՑ . ԵԿԵՂԵՑԻ
ՄԻԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

- - -

ՏԵՂԵԿԱՏԻՈՒԹԻՒՆ 1962 ՏԱՐԻՈՅ

Միրելի Անդամներ ,

Ջերմ զգացումներով եւ գոհունակութեամբ կ'ողջունենք բոլորը եւ այս տարեկան ժողովիդ կը ներկայացնենք , Գլիվլէնտի Հայց . Եկեղեցւոյ Միական Խորհուրդի գործունէութեանց նիւթական եւ բարոյական մասերը կազմող 1962 տարուան համար հետեւեալ տեղեկութիւնը :

1. Միական Խորհուրդի Կազմը

Կիրակի , Յունուար 14 , 1962 , գումարուած տարեկան անդամական ժողովին մէջ , երեք դադարեալ անդամները , Տիկ . Վարդուհի Ազարեան , Աւետիս Պաղտասարեան եւ Վահան Կարապետեան , վերընտրուեցան երկու տարուայ ժամանակամիջոցի մը համար (1962-1964) : Միական Խորհուրդը այժմ կը բաղկանայ (7) եօթը անդամներէ , որոնց վերընտրուածները , Առաջնորդարանէ վաւերացուելէ յետոյ առաջին նիստին մէջ ընտրեց իր դիւանը հետեւեալ կազմով .-

Տքթ . Գեղամ Կէօքճեան	Ատենապետ	1 տարի
Արմէն Գասապաշեան	Ատենադպիր	1 տարի
Նուպար Ապտալեան	Գանձապահ	1 տարի
Գէորգ Արսլանեան	Փ-ատենապետ	1 տարի
Տիկ . Վարդուհի Ազարեան	Փ-ատենադպիր	2 տարի
Աւետիս Պաղտասարեան	Խորհրդական	2 տարի
Վահան Կարապետեան	Խորհրդական	2 տարի

Համայնքին Թեմական Պատգամաւորն է Տքթ . Գեղամ Կէօքճեան :

Համայնքին Հոգեւոր Մատակարարն է , Բարշ . Ներսէս Սրկ . ձէպէճեան , որ կը վարէ մեր եկեղեցական գործերը , վերակենդանացնելով Համայնքին Հոգեկան պէտքերը , նաեւ նախագահելով եկեղեցւոյ ենթակայ մարմիններու անդամական եւ վարչական ժողովներու : Իր գործնական աջակցութեամբ կը կատարէ ՓԱՐՈՍԻ հրատարակութիւնը ամբողջութեամբ :

2. Ենթակայ Մարմիններ

Միական Խորհուրդը միշտ կապ պահած է եկեղեցւոյ բոլոր ենթակայ մարմիններուն հետ եւ միշտ ալ աջակցութիւն տուած է բարոյապէս ու նիւթապէս :

3. Փլէճի Դրուածներ

Փլէճի դրուածները հաստատուելէ ի վեր , կրկին մեծ ընդունելութիւն գտած է եկեղեցւոյ համար եկամտի կարեւոր եւ հաստատ աղբիւր մը ըլլալով : Մուխիս պատկանող ամէն անհատ եւ ընտանիք իր նիւթական կարողութեան համեմատական գուժարով կը մասնակցի այս դրուածեան . մեր ներկայ անդամներու թիւն է 82 :

4. Յարաբերական

Միական Խորհուրդը միշտ ալ շնացած է չի թերանալ Հոգեւորականներու հիւրասիրութեանց մէջ , անոնց ծուխի համար տուած այցելութեան պարագաներուն : Ճշգրտապահանջ եղած է ցարդ վճարելով Առաջնորդարանի տարեկան տուրքերը առանց յապաղումի :

5. Միական Խորհուրդի Ժողովներ

Միական Խորհուրդը ~~ճիշտ~~ ~~աբ~~ ~~ժողովներ~~ անցեալ տարեշրջանին գումարած է (15) հերթական ժողովներ : Հերթական ժողովներուն նկատի առնուած են թըրթակացութիւններ , Առաջնորդարանէն եկած հրահանգները կատարուած են հնարաւորութեան սահմանին մէջ , ունեցած է մէկ միացեալ ժողով համայնքիս մէջ գոյութիւնը :

իւն ունեցող կազմակերպութեանց վարչութեան ներկայացուցիչներու հետ, միասնաբար խորհրդակցելու, եւ ներդաշնակ գործակցութիւն մը ստեղծելու գաղափարով. որպէսզի յետ այսու, մեր համայնքին եկեղեցական ու ազգային կարիքներն ու գործերը առաւելագոյն կերպով արդիւնաւորուին այս համագործակցութեան ոգիէն:

6. Զերնարկներ

Ծխական Խորհուրդը եկեղեցասէր-կազմակերպութեանց մասնակցութեամբ, սարքած է երկու դաշտահանդէսներ, ինչպէս նաեւ Վարդանանց Տօնակատարութիւնը եւ Դեկտեմբեր 2-ի կիրակին Հիմնարկէքի եւ Անկիւնաքարի Օրհնութիւնը, Ամբրիկահայոց թեմին Բարեխմամ Առաջնորդ, Գերշ. Տ. Սիոն Արք. Մանուկեանի ձեռամբ, որ յատկապէս եկած էր նիւ Եորթքն: 1962 տարեշրջանին ունեցանք 12 Ս. Պատարագի պաշտամունքներ, որոնցմէ երկուքը կատարուեցան Հոգշ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեանի(այժմ Թորգոմ Եպիսկոպոս)կողմէ, որ նաեւ կատարեց կիրակօրեայ պաշտամունքներ մեր սեփական Մատուռին մէջ, ամառուան առթիւ իր հոս գտնուած միջոցին: Հոգշ. Տ. Թորգոմ Վարդապետի ի պատիւ տրուեցաւ հրատեշտի ճաշկերոյթ:

7. Ծիսական

1962 տարուոյ շրջանին համայնքս կորսնցուց իր հաւատաւոր անդամներէն Վարդան Պաղտասարեանը: Ունեցած ենք երեք մկրտութիւն:

Ծխական Խորհուրդս, սոյն տեղեկագիրը վերջացնելէ առաջ պարտք կ'զգայ, գնահատանքի մի քանի խօսքեր աւելցնել մեր եկեղեցույ ծառայող պաշտօնեաներուն եւ մարմիններուն, անոնց անձնուիրաբար եւ խղճմտօրէն աշխատանքի մասին կատարած պարտականութիւններուն համար: Ուրարակիր Կարպիս Պալտրեանի, Դպրապետ Ստեփան Սարաֆեանի, Երգեհոնահար Տիկ. Ժընէ Զէքէմեանի, Ղպիր-Ղպրուհիներու, Եկեղեցասէր Տիկնանց Միութեան, Երիտասարդաց Տիկնանց Միութեան, Հայց. Եկեղեցույ Երիտասարդաց Կազմակերպութեան, Կիրակնօրեայ Դպրոցի ազնիւ ու ժրջան Տեսչուհի Տիկ. Յլարէնս Կէօքճեանի, Դպրոցի երկսեռ ուսուցիչներու եւ բոլորիդ կը յայտնենք գնահատութիւն եւ շնորհակալութիւն:

Կը մաղթենք բոլորիդ կարողութիւն, առողջութիւն եւ յաջողութիւն 1963 տարուոյ շրջանին:

Մնամ խորին յարգանօք
ի դիմաց Գլխավոր տնօրեն Հայց. Առաք. Եկեղեցույ
Ծխ. Խորհուրդի

Արմէն Գասապաշեան
Արմէն Գասապաշեան, Ատենաղպիր: